

ՄԻԲԱԼՈՒՅՍ ՄՅՈՒՌՈՆԻ ԲՈՒՅՍԵՐԸ

*«Մարդու մարմինն թող չքսվի այն: Ձեզ
Համար նույն բաղադրությամբ նման բան
չպատրաստեք, որովհետև դա սրբություն է
և ձեզ Համար սրբություն էլ թող մնա: Ով
այդպիսի բան պատրաստի, և ով դրանից
օտարականի տա, թող վերանա իր ժողովրդի
միջից»:*

Ելք L 32-39

Հայոց Մյուտոնը իր եզակիությամբ, հասնելով բազմաթիվ բուրմունքային
նյութերով ու բույսերով տարբերվում է այլ եկեղեցիներում կիրարկվող սուրբ
յուղից:

Հայ միջնադարյան մատենագրության մեջ հատուկ տեղ են գրավում հայոց Ս.
Մյուտոնը խորհրդանշող նյութերի՝ ու բույսերի՝ Գվիդված գործերը և, բարեբախ-
տաբար, ման դրանց ամփոփ ցուցակները, երբեմն պատրաստման և օրհնության
կանոնների հետ միասին: Հետևաբար, թվում է, թե բոլոր հիմքերը կամ գոյություն
ունեցող այն կարծիքի համար, որ հայոց Ս. Մյուտոնը հիմնավորապես հայտնի է
իր ստույգ կազմությամբ՝ ամրագրված պատրաստման համար ամհրաժեշտ
բույսերի և նյութերի համընդհանուր ճանաչելի ամունքներով և նրանց կայուն
թվաքանակով: Սակայն մեր մասնավոր ուսումնասիրությունը, մյուսոճա-
գիտության բնագավառի տպագիր և մատենագիր ժառանգության մանրակրկիտ
քննությունը մեզ թույլ է տալիս արձանագրել, որ հայոց Ս. Մյուտոնի նյութերի և
բույսերի ցուցակների առայժմ հայտնի բազմաթիվ տարբերակները կարոտ են
բուսաբանական վերծանության և արդիական վերահաստատման: Դրա պատ-
ճառները խորն են և բազմաբնույթ՝ կապված պատմական, աշխարհագրական,
ծագումնաբանական և այլ գործոնների հետ: Անշուշտ, թաքնված են նաև հենց
իրենց՝ ցուցակների, մյուսն ժողովրդական, կարծես «ծանկագրված», արևելյան
ամունքների տակ: Մեր աշխատանքի նպատակն է եղել վեր հանել յուրաքանչյուր
ամվան մեղքո ակնարկվող բույսը՝ արտահայտելով այն բուսաբանական
ամվանակարգի միջազգային օրենքներին համապատասխան լատիներեն և հայ
ժողովրդին ավելի մոտ ու հարազատ՝ հայերեն գիտական համարժեքներով:

Ներկա հոդվածը հանդիսանում է մեր կողմից ձեռնարկված Ս. Մյուտոնի
համալիր հետազոտության արդյունքների ամփոփման միայն մի մասը՝ Գվիդված
օրհնության կանոնի սկզբում բերվող պատրաստվող նյութերի ցուցակի
վերլուծությանը և բնագիտական մեկնաբանությանը:

Բույսերի ժողովրդական անունները առաջացել են տականից անհիշելի ժամանակներից՝ դրանք մարդու կողմից օգտագործվելու ընթացքում: Այդ անունները ստեղծվել են տարերայնորեն տարբեր ժամանակներում, տարբեր ժողովուրդների կողմից: Դրանք արտահայտվել են մեկ բառով, քանզի յուրաքանչյուր ժողովրդի կենդանի լեզու ձգտում է ամեն մի առարկա, այդ թվում՝ մահ բույս, կոչել մեկ բառով: Սակայն այնպես է ստացվել, որ միևնույն բույսը տարբեր ժողովուրդներ կոչել են տարբեր անուններով, կամ հակառակը՝ միևնույն անունը կիրառվել է ամենատարբեր բույսերի համար: Այնուհետև, ոչ բոլոր բույսերն են կիրառվել մարդու կողմից, և մրանցից շատերը ձեռք չեն բերել ժողովրդական անուններ: Վերջապես տարբեր լեզուներով ստեղծված բույսերի ժողովրդական անունները խանգարել են մարդկանց հաղորդակցմանը: Հետևաբար, առաջացավ բույսերի գիտական անունների ստեղծման և եղած ժողովրդական անունների կայունացման անհրաժեշտությունը: Օվելո հայտնի բնախոյզ Կարլ Լինեյի (1707-1778 թթ.) կողմից առաջարկված բույսերի կրկնակի (բինար) լատիներեն անվանակարգը միասնականացրեց և կայունացրեց բույսերի անունները և այսպիսով լուծեց կարգաբանական գիտության այս հույժ կարևոր խնդիրը: Բույսերի կրկնակի անվանակարգի հիմնական նպատակն է վեր հանել տվյալ ցեղի որևէ տեսակի՝ մյուս տեսակներից ունեցած տարբերությունը՝ ընդգծելով բույսի այս կամ այն հատկանիշը: Ընդ որում, լատիներենը, որպես մեռած լեզու, հանդուրժելով արհեստական բառերի առկայությունը, դարձավ բույսերի, մահ կենդանիների կարգաբանության պաշտոնական լեզուն:

Այսպիսով, յուրաքանչյուր բույսի գիտական անունը, սկսած լինելան շրջանից, արտահայտվում է կրկնակի լատիներեն բառերով: Օրինակ, *Olea europaea* L. (Զիթենի ներդակական): Նրանցից առաջինը, որն արտահայտվում է գոյականով և գրվում մեծատառով, բույսի ցեղի անունն է, իսկ երկրորդը՝ տեսակինը: Այն հիմնականում արտահայտվում է անականով և գրվում փոքրատառով: Բույսի անունից հետո նրա հեղինակի՝ տվյալ բուսատեսակը նկարագրող գիտնականի անվան կամ ազգանվան սկզբնատառերն են կամ դրանց կրճատ ձևը: Միևնույն տեսակի համար տարբեր հեղինակների կողմից առաջարկված մի քանի անուններից (հոմանիշներ) ընդունվում է մեկը, իսկ երեք մյուսները մշվում են, ապա միայն փակագծում: 1905 թ. Վիննաչյուն կայացած բուսաբանական միջազգային կոնգրեսի որոշման համաձայն՝ յուրաքանչյուր բույս կրում է իրեն տրված առաջին անունը (պրիորիտետի իրավունք): Որպես ելակետ ընդունվում է Կ. Լինեյի «Species Plantarum» աշխատության հրատարակման տարեթիվը՝ 1753 թ.:

Ամփոփենք վերը արտահայտվածը: Բույսի ժողովրդական և գիտական անունները միմյանցից տարբերվում են ծագումնաբանական, իմացական և կիրառական առումներով: Բույսի ժողովրդական անունը բույսը ճանաչելու միջոց է տվյալ ժողովրդի, հնարավոր է նույնիսկ նրա որևէ փոքր հատվածի համար: Այն չի կարող ծառայել բույսի համընդհանուր ճանաչմանը: Միևնույն գիտական անունը բույսը ճանաչելու փոխհեղինակ միջոց է բոլորի համար: Այսպիսով, բույսը ճանաչել՝ նշանակում է իմանալ նրա գիտական անունը, այսինքն՝ իմանալ, թե որ ցեղին և տեսակին է այն պատկանում: Իմանալ միայն ցեղի անունը՝ դեռևս չի նշանակում ստույգ ճանաչել տվյալ բույսը, քանի որ ցեղի բազմաթիվ տեսակներ, լինելյան կրկնակի անվանակարգի համաձայն, միմյանցից տարբերվում են մահ տեսակային անունով:

Դարերի խորքից ժամանակի ակերախումբերի միջով անցել ու Երևանի Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում հուսալի հանգրվան են գտել հայոց Ս. Մյուտոնի մեզ հայտնի բազմաթիվ մատենագիր աղբյուրներ: Դրանք ընդգրկում են մասն Ս. Մյուտոնի մյութերի և բույսերի ցուցակներ: «Նյութերի և բույսերի ցուցակներ» արտահայտությունը կամ, ինչպես կլիմի այսուհետև, պարզապես «ցուցակներ»՝ ըստ մեզ, գերադասելի է բանավոր խոսքում կիրառվող և գրականության մեջ հանդիպող «դեղատոմս» անվանումից: Վերջինս, մեր կարծիքով, թերի է դարձնում Ս. Մյուտոնի մերձիմ բովանդակության լիարժեք ընկալումը, սահմանափակվում է միայն մրա իմաստի միակողմանի մյութական ոլորտի մշամակությամբ: Միմդեռ Ս. Մյուտոնը մյութեղեմություն արտահայտելուց ավելի իր մեջ պարունակում է հոգևոր խորհուրդ, իսկ մյութականը ծառայում է վերջինիս դրևարման համար: «Դեղատոմս»-ը չի գործածվում մասն միջնադարյան մեզ ծամոթ ձեռագրերում:

Ս. Մյուտոնիմ մկիրված մատենագիր աղբյուրներից կարելի է առանձնացնել մոտ մեկ տասնյակի չափ միջնադարյան ձեռագրեր (սկսած 14-րդ դարից), որոնք ընդգրկում են Ս. Մյուտոնի ցուցակները: Դրանց համեմատական վերլուծությունը ի հայտ է բերում սկզբունքային մեծ ընդհանրություն, թեև առկա են մասն տարբերություններ: Նյութերի և բույսերի այդ մեծ մեմությունը հաստատում է գրականության մեջ հայտնի այն միտքը, որ դրանք մեզ են փոխանցվել ընդօրինակվելով: Այդ կարծիքն են հայտնում Ս. Ե. Տեր-Հովհաննիսյանը «Արքալույս մեռոնի օրհնություն» հոդվածում («Էջմիածին», 1955, № 8, էջ 21), Հ. Քյոսեյանը¹ և այլ հեղինակներ: Ի լրացում մշեմք, որ ընդօրինակվել են ըստ երևութիմ միևնույն սկզբնաղբյուրից, իմպես մասն միմյանցից՝ հնարավոր գգուշությամբ, երբեմն՝ ստեղծագործական մոտեցմամբ, ընդ որում, ցուցաբերելով այդ գործի իմացության բարձր աստիճան:

Տպագիր աղբյուրներում Ս. Մյուտոնի ցուցակները ավելի սակավ են և մերկայումս մեզ հայտնի են մրանցից երեքը: Առաջինը և երկրորդը միևնույն «Կանոն օրհնութեան Արքալույս մեռոնիմ» վերնագրով, Վաղարշապատում 1878 թ. և 1890 թ. լույս տեսած Մաշտոցներն են, իսկ երրորդը՝ Ս. Ե. Տեր-Հովհաննիսյանի վերը մշված հոդվածը: Ատորև իր ամբողջական տեսքով տրվում է 1878 թ. Մաշտոցի ցուցակը:

ԱՆՈՒԱՆՔ ՆԻԻԹՈՑ ՍՐԲԱԼՈՅՍ ՄԵՌՈՆԻ

1. Յուտ պալասան. այս իմքն Պալասան Հրեաստանի, կամ Պալասան Եգիպտոսի. - որ է
հեղուկ. - (*Մեքկե Փելեւեմկի* կամ *Եահուտի Փելեւեմկի*) 20
2. Հապ Պալասան. Պալասան Պերուի. - որ է հումտ. - (*Եեմի տիւմեա փելեւեմկի թոհումու*) 10
3. Մեխակ. (Գարանֆի) 10
4. Ընկյոզ հեղկաց. կամ մավուզ Պուա. (*Հիմտիստան ճելիզի*) 10
5. Խնկեղեգն. (*Ղասապ զարիթե*) 10
6. Նարդոս Հնդի. (*Սիմայիլի Հիմտի*) 10

¹ Հ. Քյոսեյան, Արքալույս Մյուտոն, Էջմիածին, 1992 թ., № № 6-7, էջ 43:

7. Պղպեղ ծառայի. (Քէպպապիէ).....	10
8. Ծամբալեղակ, կամ Սամիթ յունակամ. Պասպասա Բումի. (Պոյ թօֆումու).....	10
9. Մաղաքատրոն. (Սատէճ Հնտի).....	20
10. Դարիսեմիկ, կամ Կիմամոն. (Տարչիճ).....	10
11. Խումկ. (Քիմնիկ).....	10
12. Հիլ, կամ Ղրտիմանէ. (Գագուլէ).....	20
13. Ստորաքս. (Պուֆուր մէրիէն).....	10
14. Սորեակ ճլատ. (Մալը Հնտի).....	10
15. Սանտալ սպիտակ, կամ Սանտալ ապեատ. (Սանտալ).....	20
16. Զուր յասմիկ եւ այլ ծաղկանց. կամ Միեասայիլէ. (Չիէք սույի).....	20
17. Քրքում. (Ջաֆրան).....	20
18. Մարդակուշ. - որոյ պտուղն է ձուտաւետ. - (Մէրգէնկուշ).....	20
19. Մահլապ. - որ է ազգ ինչ քրքմոյ. - (Մէլապ).....	10
20. Վաղմետուկ. (Խթիսիւրէ մէքէ).....	20
21. Կիպարիս, կամ Սօտիքօֆի. (Սիւլիւս քիւֆի).....	10
22. Ասարիոն. (Էզարուն).....	10
23. Զրվարդ. կամ պլալուկ վարդ. (Եսպանի կիւլ).....	40
24. Երիցուկ. կամ պապունման. (Փափաթիա չիլէյի).....	40
25. Մանուշակ. կամ պեմնֆշէն. (Մէնէքշէն).....	120
26. Կոկոռի կամ մոմոֆարի ծաղիկ. (Խիլիֆէր կամ Նիմէվֆէր չիլէյի).....	120
27. Նարնջի ծաղիկ. (Թուրունճ չիլէյի).....	40
28. Պղպեղ սպիտակ. (Ճիֆիւլ).....	10
29. Վայրի կակաչի տերեւ. կամ կասլի տերեւ. (Նիւմա կամ Կելիմնիկ-չիլէյի եափրաղը).....	40
30. Վայրի կակաչի ծաղիկ. կամ կասլի ծաղիկ. (Նիւման կամ Կելիմնիկ չիլէյի).....	30
31. Մրտեմոյ տերեւ. (Մերսիմ աղանը եափրաղը).....	40
32. Նարկիզ. կամ Նրճես. (Ներկիզ).....	40
33. Պտուղ դափմոյ. կամ Հապլղար. (Թէֆնէ թօֆումու).....	20
34. Լատէն. (Աֆիօն յունու).....	10
35. Կոճաղպեղ. (Ջէմնէֆիլ).....	10
36. Մազտաքի. (Սազըզ).....	20
37. Թուտ. - որ է ծխանելիք. - (Իւտ կամ Էօտ աղանը).....	20
38. Պալասամ. - որ է ձեղուկ. - (Փէլէսէմկ).....	120
39. Ամպար (Ամպէր).....	5
40. Մուշկ. (Միսք).....	5
41. Նարդոս խաթայի (Սիւմպիւլի խիթայի).....	10
42. Արմատ մանուշակի. (Մենքշէ քէօքի).....	10
43. Մատուտակ. կամ Հոռոմ խումկ. (Միա).....	20
44. Նարնջի ծաղիկ ջուր. (թուրունճ չիլէյի սույու).....	20
45. Վարդեջուր. (Կիւ սույու).....	50

Ինչպես տեսնում ենք, ցուցակում ընդգրկված են 45 կետեր: Նրանցից յուրաքանչյուրը արտահայտում է նյութի կամ բույսի հայատառ, բազմալեզու (հայերեն, արաբերեն, պարսկերեն և այլն) հիմնական և փակագծում թուրքերեն լրացուցիչ ժողովրդական անունը: Անունը ուղեկցվում է նյութի կամ բույսի օգտագործվող

կշռաչափով, որի միավորն է «տրամ»-ը: Վերջինս, համաձայն միջնադարի հայ բժշկական ձեռագրերի (Մխիթար Հերացի - ԺԲ դ., Ամիրդովլաթ Ամասիացի - ԺԵ դ.) մեկնաբանված հրատարակությունների, դեղագործության մեջ ընդունված միավորներից է և կշռում է մոտավորապես 2,942 գրամ: Վեց կետեր (1, 2, 18, 19, 37, 38) հիմնական ամուցից հետո պարունակում են մաս որոշ քաջատրությունների՝ կապված բույսի օգտագործվող մասի կամ նյութի ֆիզիկական վիճակի հետ: Բազմաթիվ կետերում հիմնական ամուցից հետո հանդիպում է «կամ» շաղկապը, որի օգտագործումը, ինչպես պարզվեց բույսերը ճանաչելուց հետո, չի ենթարկվում որևէ օրինաչափության: «Կամ»-ը հանդիպում է ինչպես մույց բույսի մինևմույց լեզվով (23, 32 և այլն), այնպես էլ մույց բույսի տարբեր լեզուներով (4, 8, 12 և այլն) արտահայտված ամուցների միջև: Այն հանդիպում է նաև միանգամայն տարբեր բույսերի ամուցների միջև (29, 30 և այլն):

Ցուցակում ամուցների մեծամասնությունը արտահայտված է մեկ քառով: Դրանք տրվում են մաս երկու քառով: Երկրորդը արտահայտում է որևէ աշխարհագրական ամուց (Հրեաստանի, Հնդկաց և այլն): Այն կարող է պարունակել տեղեկություն բույսի օգտագործվող մասի (ծաղիկ, տերև և այլն) կամ որևէ հատկության (սպիտակ և այլն) վերաբերյալ: Մի քանի կետերում ամուցը արտահայտված է երեք քառով (օրինակ «29. Վայրի կակաչի տերև ...»): Թվում է, թե այդ գոհն երկու քառով ամուցները պետք է արտահայտեին բույսի ցեղի և տեսակի ամուցը, մամալամո 15-րդ կետի «Սամալ սպիտակ»-ը համընկնում է տվյալ բույսի ցեղի և տեսակի անվան հետ: Սակայն բացի այդ կետից, որը, հավանաբար, պատահական է, մնացած բոլորը, այդ թվում մաս երկու և, մույցինս, երեք քառերով արտահայտված կետերը տարբեր լեզուներով տրվող ժողովրդական ամուցներ են և ոչ մի կապ չունեն չինեղան կրկնակի անվանակարգի հետ:

Ս. Մյուտոնի մեզ ծանոթ 1890 թ. Մաշտոցը, ինչպես մաս մյուս տպագիր ցուցակը, որը հանդիպում է Ս. Ե. Տեր-Հովհաննիսյանի հոդվածում, պարունակում է՝ առաջինը՝ 45, երկրորդը՝ 46 լակոնիկ արտահայտված կետեր, որտեղ կարճ ու կտրուկ, առանց ծավալվելու կրկնվում են 1876 թ. Մաշտոցի ցուցակի ամուցները հետևյալ ամօշման ձևափոխություններով: Առաջինում իրար են միացվել և մեկ՝ 29-րդ կետով են արտահայտվել 1876 թ. Մաշտոցի 29-րդ և 30-րդ կետերը, որոնց տարբերությունը միայն օգտագործվող մասի մեջ է (29-րդում՝ տերև, 30-րդում՝ ծաղիկ): Դրա փոխարեն այդ կետերի փակագծում մշված «Նումա»-ն մերկայացվել է առանձին կետով՝ «Նումա ... ըստ բառականին»: Ինչ վերաբերվում է Ս. Ե. Տեր-Հովհաննիսյանի ցուցակի կետերի թվի ավելացմանը, որը տեղի է ունեցել 46-րդի («46. Օշոշի ծաղիկ ևս (40 տրամ)» հաշվին, հետագայում պարզվեց, որ «Օշոշ»-ը համոզիսմուն է 24-րդ կետի «Երիցուկ»-ի հոմանիշներից մեկը: Այդպիսով այս ցուցակում ևս պահպանվել է կետերի մինևմույց թիվը:

Ընթացումը առմամբ, երեք ցուցակների վերլուծության ամփոփումից պարզվում է, որ մրանցում բույսերը արտահայտված են ժողովրդական ամուցներով, թեև ժամանակագրական առումով, մույցինս մոտ մեկ դար առաջ, 1876 թ. Մաշտոցը կազմելու ժամանակ արդեն հայտնագործված էր բույսերի լինեղան կրկնակի անվանակարգը: Այնուհանդերձ, բույսերի գիտական ամուցները չեն մտել այդ ցուցակները: Ընդհանրապես, մրանք առ այսօր դեռ չեն թափանցել Ս. Մյուտոնի բնագավառ:

Ս. Մյուտոնի նյութը «գլխաւորապէս ձեռն ու բալասանն է, որուն կը խառնուի քառասուն տեսակ հոտաւետ ծաղիկներու և խումկերու հիւթը՝ գինիով եփուած ու

քամած»²: Եվս մեկ բնութագրում գործածվող մյուսերի մոր ամուսններով. «Հայց. եկեղեցույ միտոմիս քում միպը մաքուր ձեթն է որում մէջ սովորութիւն եղած է խառնել բալասան և քառասունէ անելի ծաղիկներու, արմատներու, հումտերու, ռետիցներու և խնկեղէններու հիւրը»³:

Այսպիսով, ինչպես վկայում են տպագիր աղբյուրները և հատուկ մշակում է մահ մյուսնորոգում վերը հիշյալ 1876 թ. Մաշտոցում, «զխաւոր միւթ սրբոյ մեռոմից համարի ձեթ ի ձիթեմեաց եւ իւր պալասանի»:

Հետադարձ հայացք ձգելով դեպ հին աշխարհ, կմկատենք, որ պատահական չէ, ամբողջում, հայոց Ս. Մյուսնոր գլխավոր մյուսի՝ ձիթապտղի յուղի և մրան գուգակցող բալասանի ընտրությունը: Դրանում դժվար չէ համոզվել, եթե հիշենք, թե իմյ կարևոր մշակակություն ուներ ձիթապտղի յուղը որպես սննդամթերք և բալասանը որպես դեղամիջոց հին աշխարհում:

Ձիթեմին հին աշխարհի ժողովուրդների համար այն մշակակալից քույսերից էր. որի հետ կապված էին կյանքի տարբեր ոլորտները: Ըստ Աստվածաշնչի, բնութայն մեջ լայն տարածված ձիթեմին ավետեց ջրհեղեղի վախճանն ու խաղաղությունը (Ծմնդ. Ը 11), և Նոյը իր գերդաստանի հետ դուրս եկավ տապալից ու ամեն տեսակ կենդանիներին ու թռչուններին հանեց, որպեսզի մրանք երկրի վրա ապրեն ու բազմանան (Ծմնդ. Ը 17-18): Ձիթեմու պտղից ծծելով ու ճմլելով (Ել. ի 20, ի Թ 40) կամ կոխկրտելով (Միք. Զ 15) ստացվում էր ձիթապտղի յուղը, որը գործածվում էր որպես ուտելից (Եզեկ. ԺԶ 13) և լապտերները լուսավորելու միջոց (Ել. ի 20, ի Գ 24): Կենցաղային կիրառության ընդարձակմամբ այն թափանցեց մահ կյանքի այլ ոլորտներ: Մարմինը և մազերը մրանով օծելու սովորությամբ մուտք գործեց բժշկության ասպարեզ, որպես դեղ (Մարկ. Զ 13, Հակ. Ե 14): Մարմնի տարբեր մասերի օծումը (Սաղմ. ԵԴ 15, ՄԼԳ 2) սկսեց կիրառվել մահ ի մշան տոմի և ուրախության (Սաղ. ի Գ 5, Մատթ. Զ 17, Հովհ. ԺԲ 3), հյուրի մեծարման (Ղուկ. Է 38, 46), թագավորական ու կրոնական պաշտոնի անցմելու խորհրդանշի (Ել. ի Թ 7, 28): Բնականաբար, ձիթեմին ցորեմի և խաղողի մեծ դարձավ մշակության քույս, ամբարվեց շտեմարաններում (Բ Մնաց. ԼԲ 28) և մտավ առևտրական շրջանառության մեջ (Եզր. Գ 7, Եզեկ. ի 17, Ովս. ԺԲ 2), իսկ ձիթապտղի յուղի բնական մյուսերով հոտավետացված խառնուրդը ընդունվեց որպես օծման յուղ:

Հին աշխարհի ժողովուրդների համար կարևոր մշակակություն ուներ մահ բալասանը: Սակայն մրա գործածությունը, ի տարբերություն ձիթապտղի յուղի, կրում էր ավելի պակաս կենսական մշակակություն և ուներ սահմանափակ կիրառում: Աստվածաշնչում բալասանը հիշատակվում է երկու իմաստով. ընդհանրական՝ բժշկության համար (Երեմ. ԾԱ 8) և մասնավոր՝ որպես որոշակի մյուս՝ դեղամիջոց (Եզեկ. ի 17): Ծառը, որից ստացվում էր բալասանը, Հրեաստանում անցյալում հանդիպում էր մեծ քանակությամբ (Երեմ. ի Զ 11): Մարդիկ սովորել էին մրանով բուծել տարբեր հիվանդություններ (Երեմ. Ը 22): Դրա համար բալասանը ձեռք բերեց մեծ համբավ, դարձավ մուսուլման առևտրի կարևոր առարկա՝ առևտրափոխանակման հիմնական մյուսերին՝ ցորեմին, մեղրին, ձիթապտղին հավասար մշակակությամբ (Եզեկ. ի 17): Սակայն,

² Մ. Ա. Օրմանյան, Ազգապատում, Պէյրուք, 1959, հատոր Ա, մասն Ա, էջ 620:

³ Դ. Ե., Օրհմութիւն Ս. Միուսնի, Անթիլիան, 1948, էջ 6:

քնակամաքար, այն դասվում էր առևտրի հատուկ մյուսերի շարքը: Երկրից երկիր տեղափոխվող ուղևորի քարավանները քալասանը տանում էին հոտավետ «համեմներ» (համեմումքներ) և զմուտսի հետ միասին (Ծմմդ. ԼԷ 25):

Հատուկ ցամկանում ենք շեշտել այն հանգամանքը, որ Աստվածաշնչում քալասանը և «համեմները» զուգակցվում են զմուտսի հետ: Վերջինս կնդրուկի* և հալվեի* հետ միասին դասվում էր խնկերի շարքը (Երգ. Գ 6): Զմուտսը ստացվում էր համանում՝ «զմուտսի լեռան» վրա մեծ քանակությամբ համդիպող քույսից (Երգ. Դ 6): Այն շատ պատվական ու հարգի մյուս էր (Սաղմ. ԽԵ 8, Երգ. Ե 5, 13): Այդ առումով հատուկ հիշատակվում է Գույմիսկ Բրիստոսի ծննդյան ժամանակից, երբ մոգերը արևելքից եկան Աստծու Միածին Որդուն երկրպագելու ու իրենց զանգերից մեծամեծ ըմբաներ մվիրեցին՝ ցրած: Այդ զանգերի մեջ ոսկու և կնդրուկի կողքին հիշվում է մահ զմուտսը (Մատթ. Բ 11): Զմուտսը, խնկի և հալվեի մեծ, գործածվում էր ծխացնելու և մաքրություն պահպանելու համար (Եսթ. Բ 12): Սակայն ցրած ամենազխալիքը արժանիքը ամկեմդան մարմինը զմուտսի՝ ցրած ցեխումից գերծ պահելու մեջ էր (Ծմմդ. Ծ 2, 9, 26, Հովհ. ԺԹ 39): Այդ արվեստին կատարելապես տիրապետում էին եգիպտացիները, որի վառ ապացույցները՝ մումիաները հայտնի են աշխարհին: Սակայն հրեաներն էլ սովորություն ունեին խմկերով ու զմուտսով փաթաթել դիմ կտավի մեջ (Հովհ. ԺԹ 40): Փրկչի համար Հովսեփն ու Նիկողեմոսը գործածեցին մեծ քանակությամբ զմուտսի ու հալվեի խառնուրդ (Հովհ. ԺԹ 39): Հատկաճշակամ է, իսկ Ս. Մյուտոնի պարագայում շատ կարևոր, որ քարծրորակ և մաքուր զմուտսը համդիսանում էր մվիրական օծման յուղի կարևոր քաղաղութամասը (Ել. Լ 23):

Այսպիսով, ձիթապտղի յուղը ուներ կենսական մեծ նշանակություն և գործածվում էր կյանքի տարբեր բնագավառներում, քալասանը շատ հարգի էր որպես դեղ, իսկ զմուտսը՝ դիակները զմուտելու միջոց: Բոլոր երեք մյուսերը համդիսանում էին առևտրի կարևոր առարկա, տեղափոխվում էին երկրից-երկիր՝ ձեռքից-ձեռք անցնելով, մերթափանցում տարբեր ժողովուրդների կյանքի մեջ: Ահա մրանցից երկուսը՝ ձիթապտղի յուղը և քալասանը դառնում են հայոց Ս. Մյուտոնի գլխավոր մյուսերը և համեմվում բազմաթիվ խմկերով ու հոտավետ քույսերով:



Ըստ ավանդությունների, հայոց Ս. Մյուտոնը դեռևս առաքելական ժամանակներում եղել է քրիստոնեական ընդհանուր Եկեղեցու օծման յուղի մեծ կամ, համեմայն դեպս, ցրած մոտ կազմությամբ:

Հայոց Ս. Մյուտոնի մախազադափարը և մախմական ձևը, ըստ երևույթի, հարկ է փնտրել Աստվածաշնչում: Ինչպես մեզ թվում է, ցրած մախատիպը, բավական արտահայտիչ, գտնում ենք Հիմ Կտակարանում: Հատկապես մկատի ունենա ցրած օծման յուղին վերաբերվող հետևյալ տողերը. «Առ քեզ պատուական համեմներ, զուտ զմուտս հիմզ հարիւր սիկդ** և ամոր կեւիմ չափ՝ այսիմքմ երկու հարիւր յիսում սիկդ ամուշափոտ կենամոմ ու երկու հարիւր յիսում սիկդ

* Օղթայական ոռակցիայի մեծ ամբողջատ ավելանում են քուսաքամական մեկնության կարող մոր անուններ:

** Աստվածաշնչում սիկդը պիմո մյուսի կշիռն է, իսկ հիմեմը՝ հեղամյուսի չափը:

ամուշամոտ խմկեղեզմ: Եւ Քիմզ Քարիւր սիկղ կասիա՝ սրբարամիմ սիկղիմ համեմատ ու մեկ հիմեց ձէթ» (Եւ. Լ 23, 24): Այս վկայությունը մանրակրկիտ վերլուծելու դեպքում, կարելի է վեր համել օժմամ յուղի կազմության որոշ մանրամասներ և այն համեմատել հայոց Ս. Մյուտոնի հետ:

Այսպէս, նախ օժմամ յուղի ձշված նյութերի մեջ քամակապէս գերակշռում է «ձէթը»: Հետևաբար, որա գլխավոր նյութը «ձէթ»-ն է: Այնուհետև, վերջինիմ գումարվում եմ պատվական համեմները՝ զմուտ, կիմամոմ, խմկեղեզ և կասիա: Նրամեցից առաջինը զմուտն է, որը իր քամակով գերազանցում է երկրորդ և երրորդ նյութերին: Հետևաբար զմուտը համդիսանում է օժմամ յուղի հաջորդ կարևոր նյութը: Երկրորդ նյութը՝ կիմամոմը, և երրորդը՝ խմկեղեզն, արդեն միմյանց հավասար եմ, սակայն զմուտսից կիսով չափ պակաս: Չորրորդ նյութը կասիան է: Միմչև օժմամ յուղի՝ մեր վերլուծության ամփոփումը, մկատեմք, որ Աստվածաշնչի այլ հրատարակություններում, օրիմակ՝ 1805 թ. վեցեւիկում (աշխատասիրությամբ Հ. Հովհաննու Զոհրապյանի) կամ 1994 թ. Մայր Աթոռ Սուրբ Էշմիածնում հրատարակված տարբերակներում կասիայի փոխարեն հիրիկն է: Այդ կապակցությամբ ուզում եմք ըմթերցողի ուշադրությունը կրկին հրավիրել այն մտքի վրա, որ թուսի ժողովրդական անուը որևէ լեզվից (տվյալ դեպքում՝ սկզբնական եբրայերեցից) մեկ այլ լեզվով թարգմանելիս կարող է եմթարկվել մասնագիտական սխալ մեկնաբանության: Ահա օժմամ յուղի չորրորդ բաղադրիչի դեպքում ունեմք դրա ցայտում ապացույցը: Ամկախ մրամից, թե Աստվածաշնչի նախնական տարբերակում օժմամ յուղի չորրորդ բաղադրիչը իմչ է (կասիա, հիրիկ թե այլ թույս), միևնույն է, արդեն թուսի ժողովրդական անվան սխալ մեկնաբանումը պատճառ է դարձել որա տարբեր հրատարակություններում այդ բաղադրիչի տարբեր անուններով հանդես գալում:

Օժմամ յուղի գլխավոր նյութը ձիթապտղի յուղն է, որիմ գուգակցվում է զմուտը, ապա հոտավետ նյութերը՝ կիմամոմը, խմկեղեզը և կասիան (կամ հիրիկը): Ս. Մյուտոնի կազմության գլխավոր նյութը ձիթապտղի յուղն է, որիմ խառնվում է բալասան և քառասուն տեսակի հոտավետ ծաղիկների խմկերի գիմով եփած հյութը: Օժմամ յուղի և Ս. Մյուտոնի այս բնութագիրները միմյանց հետ համեմատելիս, իսկույմ երևում է որանց գլխավոր նյութի նույնությունը:

Հայոց Ս. Մյուտոնի թույսերի գիտական անունների վերծանման ժամանակ կարևոր դեր է խաղացել հատկապէս թուսաբանական գրականությունը, այնուհետև՝ բազմաբնույթ բառարանները (թարգմանական, բացատրական, արմատական և այլն), իմչպէս ման միջնադարի հայ բնագետ-բժիշկների (Մխիթար Հերացի՝ 12-րդ դ., Գրիգորիս՝ 13-րդ դ., Ամիրդովլաթ Ամասիացի՝ 15-րդ դ., Ասար Սեբաստացի՝ 16-17 դդ., Բուցիաթ Սեբաստացի՝ 17-րդ դ.) անտիպ բնագրերի մեկնաբանված հրատարակությունները: Նշված սկզբնաղբյուրների համալիր ուսումնասիրության և ստացված արդյունքների համեմատական վերլուծության միջոցով առաջին անգամ փորձ է արվում վեր համել Ս. Մյուտոնի թույսերի գիտական անունները:

Այս աշխատանքի ըմթացքում կարևոր էր հատկապէս պարգել, թե տվյալ ժողովրդական անվան տակ իմչ թույս կամ նյութ եմ մկատի ունեցել պատմական անցյալում, և որիմ կարող էր այն համապատասխանել այժմ: Յուրաքանչյուր կետում արտահայտված թույսի (թույսերի) հմագույն ժամանակներից մեզ հասած ժողովրդական անունների միջոցով գիտական անունների վերծանումը

իրականացվել է՝ ելնելով ներկայիս ֆլորայի ցեղերի և տեսակների արտաքին ձևաբանական հատկանիշների, աշխարհագրական տարածման, էկոլոգիական, կիրառական և այլ առանձնահատկությունների ուսումնասիրության հիման վրա: Մեթոդապես այս աշխատանքը խիստ տարբերվում է բույսերի որոշման սովորական աշխատանքից: Բույսերի բացակայության պատճառով հաճախ անհրաժեշտություն է առաջացել կիրառել ամենատարբեր, կոնկրետ տվյալ դեպքին համապատասխան մոտեցումներ: Դժբախտաբար, միշտ չէ, որ հնարավոր է եղել ստույգ գտնել, թե տվյալ անվան տակ ինչ են նկատի ունեցել մեր նախնիները և, բնականաբար, մեզան դեպքում գիտական անուրը վերծանվել է մոտավոր ճշտությամբ:

Շրջանցելով վերծանության քարդ և աշխատատար գործընթացի մանրամասների շարադրումը, ստորև տրվում է 1876 թ. Մաշտոցի բոլոր կետերում նկատի ունեցվող բույսերի գիտական կրկնակի անուանումները՝ լատին և հայ լեզուներով: Այնուհետև տրվում են տեղեկություններ բույսի կենսաձևի (ծառ, թուփ, լիան, խոտաբույս), երկրագնդի վրա ունեցած տարածվածության, տնտեսական նպատակով մշակության և նրա օգտագործվող մասի կամ նրանից ստացվող նյութի վերաբերյալ: Նկատի ունենալով, որ Ս. Մյունտնի գլխավոր նյութը ձիթապտղի յուղն է, այն տրվում է սկզբում, մինչև ցուցակի կետերը, թեև Մաշտոցում նշվում է միայն ցուցակից հետո, ծանոթության մեջ:

«զձէթն ի ձիթենեաց ըստ բաականին»

Olea europaea L., Ձիթենի եվրոպական

Մշտադալար ծառ է: Գիտականները տարակարծիք են ձիթենու հայրենիքի և վայրի նախահոր հարցում: Սակայն նրանցից մեծ մասի կարծիքով ձիթենու ավելի քան 500 մշակովի տեսակները սերվում են նշված տեսակից: Ձիթենին համաշխարհային մշակության արդյունաբերական կոպտորա է և մշակվում է աշխարհի բազմաթիվ երկրներում (Հունաստան, Իսպանիա, Իտալիա, Ալժիր, Թուրքիա, ԱՄՆ և այլն): Ձիթապտղի յուղը ստացվում է ձիթենու պտղի մամուլմից:

«1. Յոտ պալասան. այս ինքն Պալասան Հրեաստանի, կամ Պալասան Եգիպտոսի. - որ է հեղուկ. - (Մեքլե Փելեւեճկի կամ Եմֆոտի Փելեւեճկի)... 20***»:

Commifora opobalsamum (L.) Engl., Կոմիֆորա բալզամային

Մշտադալար ծառ է: Բնության մեջ հանդիպում է Արաբական թերակղզու հարավ-արևմուտքում և Սոմալիում: Այն մշակվում է Պաղեստինում, այսպես կոչված՝ մեքայի բալզամ ստանալու նպատակով: Բալզամը՝ բալասան կոչվող հեղանյութը (յուղային ձյութ), ծորում է ծառի կեղևի կտրվածքից:

«2. Հապ Պալասան. Պալասան Պերուի. - որ է հում. - (Եեմի տինենա փելեւեճկի թոհում)... 10»

Myroxylon balsamum (L.) Harms, Միրոքսիլոն բալզամակիր

Մշտադալար ծառ է: Բնության մեջ հանդիպում է Հարավային Ամերիկայի (այդ թվում՝ Պերու) խաղաղ Օվկիանոսի ափամերձ գոտում: Մշակվում է վեստ-ինդյան կղզիներում, մավա կղզում, Հնդկաստանում և Օրի Հանկայում: Բալզամը

*** Այս և մնացած բոլոր կետերում կշռաչափը արտահայտված է «տրամ»-ով:

ստացվում է ծառի կեղևի կտրվածքից: 1890 թ. Մաշտոցի և Ս. Ե. Տեր-Հովհաննիսյանի ցուցակներում տրվում է միայն «2. Հաք քալասան» արտահայտությունը:

«3. Մեխակ. (Գարանգիլ)... 10»

Syzigium aromaticum (L.) Merr. et Houtt., Սիզիգիում բուրավետ

Մշտադալար ծառ է: Ծագումով Մալայան արշիպելագի, Մոլուքյան կղզիներից (Ինդոնեզիա): Ներկայումս արդյունաբերական մասշտաբներով մշակվում է Հարավ-Արևելյան Ասիայի (Հնդկաստան, Հնդկաչին, Ինդոնեզիա և այլն) և Աֆրիկայի (հատկապես Տանզանիա) արևադարձային երկրներում: Աշխարհահռչակ մեխակ համեմունքը մշված տեսակի ծաղկաբոլորոցներն են, որոնց վառ կարմիր գույնը չորամալիս դառնում է մուգ դարչնագույն:

«4. Ընկույզ հնդկաց. կամ Ժավուզ Պուա. (Հիմտիստան Եվրոպի)... 10»

Myristica fragrans Houtt., Մշկընկույզ հոտավետ

Մշտադալար ծառ է: Բնության մեջ հանդիպում է Մոլուքյան կղզիներում: Արտահաման մպատակով մշակվում է Հարավ-Արևելյան Ասիայում, Աֆրիկայի և Ամերիկայի արևադարձային երկրներում: Համաշխարհային ճշմարտության մշկընկույզ համեմունքը, մշված տեսակի ընկույզաման, փայտացած կեղևով, ձվաձև սերմն է:

«5. Խնկեղեգն. (Ղասապ զարիրե)... 10»

Acorus calamus L., Խնկեղեգ եղեգային

Ջրային բազմամյա խոտաբույս է: Տարածված է հյուսիսային կիսագնդով մեկ, թեև մեր հավանական հայրենիքը Հարավ-Արևելյան Ասիան է: Որպես արդյունաբերական կուլտուրա մշակվում է բազմաթիվ երկրներում (Իրան, Հնդկաստան, Բիրմա, Չինաստան և այլն): Օգտագործվում է բույսի բոլոր մասերը, հատկապես կոճղարմատը, որը պարունակում է մեծ քանակությամբ խնկեղեգային (կալամուսային) եթերայուղ:

«6. Նարդոս Հնդի. (Սիմպալի Հիմտի) ... 10»

Nardostachys jatamansi DC., Նարդոստախիս Յատամանսի

Բազմամյա խոտաբույս է: Բնության մեջ հանդիպում է Նեպալի և Հնդկաստանի բարձր լեռնային շրջաններում: Բնական պաշարների պահպանության մպատակով ման մշակվում է: Կոճղարմատը պարունակում է հոտավետ եթերայուղ:

«7. Պղպեղ Յաւայի. (Քեպապիե)... 10»

Piper cubeba L., Պղպեղ քութեքա

Փայտացող ցողուններով լիան է: Բնության մեջ հանդիպում է Մալակա թերակղզում և Մալայան արշիպելագի Մոլուքյան և Ջոնդայն կղզիներում: Արդյունաբերական մպատակով մշակվում է Հնդկաստանում, Օրի Հանկայում, Մավա,

Սումատրա, Անտիլյան կղզիներում և այլուր: Հայտնի հեղեղապղպեղ համեմունքը
Գշված բուսատեսակի կորիզապտուղն է:

«8. Շամբալեղակ, կամ Սամիթ յունական. Պասպասա Բումի. (Պոյ թօփու-
մու)...10»

Այս կետը պարունակում է երկու միամգամայն տարբեր բույսերի անուններ:
«Շամբալեղակ կամ Սամիթ յունական ... (Պոյ թօփումու)» անունները վերագրվում
են *Trigoneilla foenum-graecum* L. - Հացհամեմ հունական խոտ տեսակին,
իսկ «Պասպասա»-ն՝ «մշկընկույզի գույն» կամ «մացիս» անունը կրող համե-
մունքին, որը հանրաճայտ Մշկընկույզ հոտավետ (Տես ցանկի 4-րդ կետը)
տեսակի վառ կարմիր խնկափոտ սերմնապատյանն է: Վերջինս, իր բուրմունցից
եթերայուղով, ավելի դուրին է պատկերացնել Ս. Մյուռոմի մյութերի շարքում,
քան ալկալոիդներով հարուստ հացհամեմը:

«9. Մադաբատրոն. (Սատեճ Հնտի)... 20»

Cinnamomum cassia Blume, Դարչնածառ չինական, կասիա

Մշտադալար ծառ է: Բնության մեջ չի պահպանվել, հայտնի է միայն մշա-
կության մեջ: Արդյունաբերական չափերով մշակվում է Հարավային Չինաս-
տանում, Հնդկաստանում, Օրի Լանկայում, Վիետնամում, Ժավա և Սումատրա
կղզիներում: Ներմուծվել է նաև Հարավային Ասիայից: Հանրաճայտ դարչին
համեմունքից քացի, այս տեսակից ստացվում է նաև «կասիայի բոլորջներ»
համեմունքը (պտուղները՝ չոր վիճակում):

«10. Դարիսնմիկ, կամ Կինամոն. (Տարչին)... 10»

Cinnamomum zeylanicum Blume, Դարչնածառ ցեյլոնյան

Մշտադալար ծառ է: Բնության մեջ հանդիպում է Հարավային Հնդկաստանում
և Օրի Լանկայում: Արդյունաբերական չափերով մշակվում է աշխարհի
բազմաթիվ երկրներում: Աշխարհափոխակ և մեծ ժողովրդականություն վայելող
դարչին համեմունքը ստացվում է այս ծառատեսակի մերքին կեղևից:

«11. Խունկ. (Հիւնցիկ)... 10»

Խունկ հավաքական հասկացությունը կիրառվում է տարբեր բուսատեսակներից
ստացվող քարդ քիմիական կառուցվածքով օժտված հոտավետ խեժային ծյութերը
անվամակոչելու համար: Նրանք արտազատվում են հեղուկ վիճակում, սակայն
իրենց քիմիական յուրահատկությունների շնորհիվ, օդի հետ շփվելիս, պնդանում
են և դառնում տարբեր գույմի, ձևի և չափի կտորներ: Ավելի հաճախ գործածվում
է դեռևս հին աշխարհի ժողովուրդներին ծանոթ *Boswellia carterii* Birdw. -
Բոսվելիա Քարտերի (խնկի ծառ) տեսակից ստացվող խունկը: Տեսակը աճում է
Արաբական թերակղզում, Սոմալիում և Սոկոտրա կղզում:

«12. Հիլ, կամ Դրտիմանէ. (Գագուլե)... 20»

Elettaria cardamomum (L.) Maton, Կարդամոն իսկական

Բազմամյա խոտաբույս է: Բնության մեջ հանդիպում է միայն Հարավային
Հնդկաստանի լեռնային անտառներում (Կարդամոնյան լեռներ), սակայն արդյու-
նաբերական չափերով մշակվում է նաև Օրի Լանկայում, Բիրմայում,

Հնդկաչինոմ, Հարավային Չինաստանում և այլուր: Համրահայտ կարդամնո համեմունքը այս տեսակի հոտավետ եթերայուղով հարուստ սերմեր են:

«13. Ստորաքս. (Պուֆուր մերիէմ)... 10»

Styrax officinalis L., Ստյուրակ դեղատու

Մշտադալար ծառ է: Աճում է միջերկրածովյան ավազանի արևելյան մասում սկսած Իտալիայից մինչև Փոքր Ասիա ներառյալ: Միջազգային շուկայում բարձր են գնահատվում նաև Ստյուրակ ցեղի տարբեր տեսակներից (*S. bensoin Dryand.*, *S. tonkinense Graib.*, *S. sumatranum J. J. Smith* և այլն) ստացվող խմկերը, որոնց արտահանվում են ժավա, Սումատրա, Կալինանտան կղզիներից: «Ստորաքս»-ը ծառից արտազատվող հեղուկ ձյութ է, որը օդի հետ շփվելիս արագ չորանում է և դառնում պինդ մյուր:

«14. Սորենակ հլատ. (Ճալո Հնոտի)... 10»

Cymbopogon nardus (L.) Rendle, Ցիմբոպոգոն մարդոս

Բազմամյա խոտաբույս է: Բնության մեջ հանդիպում է Հնդկաստանի և Ծրի Լամկայի լեռներում: Մշակվում է նաև Բիրմայում, Մալայզիայում և այլուր: Տերևները պարունակում են հոտավետ եթերայուղ:

«15. Սանտալ սպիտակ, կամ Սանտալ ապետ. (Սանտալ)... 20»

Santalum album L., Սանտալեմի սպիտակ

Մշտադալար ծառ է: Բնության մեջ հանդիպում է Մալայան արշիպելագի կղզիներում՝ սկսած ժավայից մինչև Փոքր Զոնդյան Թիմոր կղզին և Հնդկաստան, որտեղ համարվում է վայրենացած տեսակ: Մշակվում է Հնդկաստանում, հատկապես Մայսուր մահամզում: Ծառատեսակի բնափայտի միջուկը պարունակում է հոտավետ եթերայուղ:

«16. Զուր յասմին եւ այլ ծաղկանց. կամ Միետալիլէ. (Չիչեք սույի)... 20»

Այս կետում նշված են երկու տարբեր քուսատեսակների հետ մույնակամացվող անուններ: Առաջինը – ջուր հասմիկի և այլ ծաղկանց (Չիչեք սույի) հավաքական ձյութ է՝ Հասմիկի և այլ ծաղիկների մասնակցությամբ, երկրորդը – միետալիլէ, որը կոչվում է նաև «միա» ձյութ է և ստացվում է Արուսեմի հարավային տեսակից:

Jasminum officinale L., Հասմիկ դեղատու

Թուփ է: Բուսատեսակը տարածված է Հարավային Եվրոպայում, Հյուսիսային Աֆրիկայում, Հարավ-Արևելյան Ասիայում և Հյուսիսային Ամերիկայում: Նշված մայրցամաքներում մշակվում է որպես եթերայուղատու բույս:

Liquidambar orientalis Mill., Արուսեմի հարավային

Այս ծառատեսակից արտազատվող յուղային ձյութը կոչվում է նաև «լեամտական բալզամ»՝ տեսակի անմահ վայրի ընդհանուր Լեամտ (Հումաստան, Կիպրոս, Սիրիա, Լիբանան, Իսրայել, Թուրքիա) անունից:

1890 թ. Մաշտոցում այս կետը արտահայտված է «Միեռասպիլե» բառով. իսկ Ս. Ե. Տեր-Հովհաննիսյանի ցուցակում «16. Ջուռ յասմին եւ այլ ծաղկամբ...» ձևով:

«17. Բրբուռ. (Ջաֆրան)... 20»

Crocus sativus L., Բրբուռ ցանովի

Բազմամյա խոտաբույս է: Հայտնի է միայն մշակության մեջ: Արդյունաբերական չափերով մշակվում է աշխարհի բազմաթիվ երկրներում: Նրա մշակությանը աչքի են ընկնում Հարավային Ֆրանսիան և Իսպանիան: Մաղի վարսանդի գազաթմային մասը՝ եռաբաժան սպից, համրահայտ համեմունք է:

«18. Մարդակուշ. - որոշ պտուղն է հոտաւէտ. - (Մերգեմկուշ)... 20»

Origanum majorana L., Խնկածաղիկ մայորանի

Բազմամյա խոտաբույս է: Ունի միջերկրածովյան ծագում: Մշակվում է Միջերկրական ծովի առափնյա երկրներում, Հարավային Ասիայում և Ամերիկայում: Տերևները պարունակում են հոտավետ եթերայուղ:

«19. Մահլապ. - որ է ազգ ինչ քրքմոյ. - (Մելապ)... 10»

Laurocerasus officinalis Roem., Դափնեկեռաս դեղատու

Մշտադալար թուփ է: Տարածված է Հարավային Եվրոպայում, Փոքր Ասիայում, Արևմտյան Ասիայի երկրներում: Օգտագործվում է սերմը:

«20. Վաղմեռուկ. (Իթխիբե մեքե)... 20»

Cymbopogon citratus (DC.) Stapf, Ցիմբոպոգոն լիմոնգրասի

Բազմամյա խոտաբույս է: Հայտնի է միայն մշակության մեջ: Արդյունաբերական չափերով մշակվում է Հնդկաստանում, Շրի Լանկայում, Մալայզիայում: Տերևներից ստացվում է լիմոնգրասի եթերայուղ:

«21. Կիպարիս, կամ Սօտիքօֆի. (Սիլիստ քիֆի)... 10»

Cyperus rotundus L., Դում կլոթ

Բազմամյա խոտաբույս է: Տարածված է աշխարհով մեկ, բայց ավելի շատ Ասիայի արևադարձային և մերձարևադարձային երկրներում: Մշակվում է մաև Աֆրիկայում (Սահարայի օազիս): Կոճղարմատի պալարանման հաստացումները պարունակում են հոտավետ եթերայուղ:

«22. Ասարիոն. (Էզարում)... 10»

Asarum europaeum L., Ասարոն եվրոպական

Բազմամյա խոտաբույս է: Հանդիպում է հյուսիսային կիսագնդի բարեխաղող գոտու լայնատերև անտառներում: Այն անցյալում ավելի հայտնի դեղաբույս էր, քան այժմ: Օգտագործվում է բույսի տարբեր մասերը, հատկապես եթերայուղով հարուստ արմատները:

«23. Զրվարդ. կամ պլպլուկ վարդ. (Եապամի կիլ)... 40»

Rosa centifolia L., Վարդ հարյուրատերև

Թուփ է, ծագումով՝ հավանաբար Իրանից: Տարածված է ման Հարավ-Արևելյան Եվրոպայում, Անդրկովկասում, Փոքր և Միջին Ասիայում, Հնդկաստանում: Պատկաթերթերը պարունակում են հոտավետ եթերայուղ:

«24. Երիցուկ. կամ պապունճ. (Փափաթիա չիչեյի)... 40» .

Matricaria recutita L., Երիցուկ դեղատնային

Միամյա խոտաբույս է: Տարածված է Եվրոպայում (բացի ծայր հյուսիսից), Ասիայում (Փոքր Ասիայից մինչև Պակիստան), Հյուսիսային Աֆրիկայում: Որպես մոլախոտ թափանցել է Հյուսիսային Ամերիկա և Ավստրալիա: Ծաղիկները պարունակում են եթերայուղ:

«25. Մանուշակ. կամ պեմեֆշեճ. (Մեմեշշե)... 120»

Viola odorata L., Մանուշակ բուրավետ

Բազմամյա խոտաբույս է: Տարածված է ամբողջ Եվրոպայում, Կովկասում, Իրանում, Փոքր Ասիայում և Միջին Ասիայում: Մշակվում է Հարավային Ֆրանսիայում, Իսպանիայում, Իտալիայում, Ալժիրում և այլուր: Ծաղիկները պարունակում են հոտավետ եթերայուղ:

«26. Կոկոսի կամ մոնոֆարի ծաղիկ. (Իլիուֆեր կամ Նիմեվֆեր չիչեյի)... 120»

Nelumbo nucifera Gaertn., Լոտոս ընկույզակիր

Բազմամյա ջրային խոտաբույս է: Հավանաբար, ման մարդու կողմից մշակվելու հետևանքով ձեռք է բերել բնականից ավելի մեծ տարածում Հարավ-Արևելյան Ասիայում և Ավստրալիայի հյուսիսում ու մրանց միջև ընկած օվկիանոսային կղզիներում, ինչպես նաև Կասպից ծովի ափերին՝ Վոլգայի և Բոսի գետաբերաններում: Աերմերը և կոճղարմատը պարունակում են ամենաբազմազան միութեր:

«27. Նարնջի ծաղիկ. (Թուրումճ չիչեյի)... 40»

Citrus aurantium L., Նարնջեծի թթու

Մշտադալար ծառ է: Հայրենիքը համարվում է Հարավային Չինաստանը, Հնդկաստանը և Հնդկաչինը: Մշակվում է Հարավ-Արևելյան Ասիայում: Ծաղիկները պարունակում են հոտավետ եթերայուղ:

«28. Պղպեղ սպիտակ. (Ֆլֆիլ)... 10»

Piper nigrum L., Պղպեղ սև

Օղային արմատների օգնության մագլցող լիան է: Համեմունքների միջազգային առևտրում հայտնի սև և սպիտակ պղպեղ համեմունքները ստացվում են մշված տեսակից, միայն սևը բույսի ամբողջ պտուղն է, սպիտակը՝ պտղակորիզը: Բնության մեջ համդիպում է Հնդկաստանում, Օրի Լանկայում և Մալայան արշիպելագի կղզիներում: Մշակվում է Ասիայի, Աֆրիկայի և Հարավային Ամերիկայի արևադարձային երկրներում:

«29. Վայրի կակաչի տերեւ. կամ կապի տերեւ. (Նիմա կամ կելիմճիկ-չիչեյի եափրաղը)... 40»

Այս և Քաջորդ կետում քույսերի ամուճանքը կրկնվում են, թեև մշվում է մրանց տարբեր օրգանները, 29-րդում տերևը, 30-րդում ծաղիկը: Երկուսում առկա են երեք տարբեր ցեղեր մատնամշող դարավոր ամուճներ. կակաչ (*Papaver L.*), կասլա (*Laurus L.*), Նումա (*Citrus L.*): Հիմք ընդունելով մշված քույսերի գործածվող օրգանների (տերև, ծաղիկ) կիրառական արժանիքները, ըստ երևույթին, այս կետերում Քաջորդաբար պետք է ենթադրել կասլի տերևը և մումայի ծաղիկը: Ս. Ե. Տեր-Հովհաննիսյանի ցուցակի այս կետում «29. Վայրի կակաչի կամ կասլի տերև...»-ն է, իսկ 1890 թ. Մաշտոցում միայն «կասլի տերև...»-ը:

Laurus nobilis L., Դափնի ազնիվ

Մշտադալար ծառ է: Տարածված է Միջերկրական ծովի առափնյա երկրներում ու կղզիներում, որտեղ, ինչպես նաև Սև ծովի առափնյա գոտում, մշակվում է արդյունաբերական չափերով: Բոլոր մասերը, հատկապես տերևը և պտուղը, պարունակում է հոտավետ եթերայուղ:

«30. Վայրի կակաչի ծաղիկ. կամ կասլի ծաղիկ. (Նիումա կամ կելիմոսիկ չիլեյի)... 30»

Citrus limetta Risso., Յիտրուս լիմետա, Նումայենի

Մշտադալար ծառ է, ծագումով Հիմալայներից: Մշակվում է Հարավային Եվրոպայում, Հարավ-Արևելյան Ասիայում, Աֆրիկայում և Ամերիկայում: Ծաղիկները և պտուղը պարունակում են լիմոնի հոտով եթերայուղ:

«31. Մրտեմոյ տերեւ. (Մերսիմ աղաճը եսփրաղը)... 40»

Myrtus communis L., Մրտեմի սովորական

Մշտադալար թուփ է: Բնության մեջ հանդիպում է Միջերկրական ծովի առափնյա երկրներում և կղզիներում, տարածվելով դեպի արևելք, հասնում է մինչև Աֆղանստան ու պատմական Բելուջստան: Մշակվում է Հարավային Եվրոպայում, Հյուսիսային Աֆրիկայում (Ալժիր, Եթովպիա, Սոմալի և այլն), Հնդկաստանում և այլուր: Տերևները և ծաղիկները պարունակում են եթերայուղ:

«32. Նարկիզ. կամ Նրճես. (Ներկիզ)... 40»

Նարկիզ անունը կիրառվում է երկու միանգամայն տարբեր ցեղեր անվանակոչելու համար (*Narcissus L.* և *Calendula L.*): Ըստ երևույթին, ավելի հավանական է երկրորդը (կրում է նաև Վաղեմակ անունը), հատկապես մրա վ. դեղատու տեսակը, քանի որ առաջինի ծաղիկները չորամալիս իսպառ կորցնում են իրենց հոտավետությունը (եթերայուղը):

Calendula officinalis L., Վաղեմակ դեղատու

Միամյա խոտաբույս է: Բնության մեջ հանդիպում է Միջերկրական ծովի առափնյա երկրներում տարածվելով մինչև Իրան մերօրյա: Այդ երկրներում նաև մշակվում է: Ծաղիկներն ու սերմերը պարունակում են եթերայուղ:

«33. Պտուղ դափնույ. կամ Հապլդար. (Թէֆնէ թահումու)... 20»

Laurus nobilis L., Դափնի ազնիվ

«34. Լատեմ. (Աֆիոն րուֆու)... 10»

Այս կետում առկա են՝ ոչ համարժեք մյուսերի ամուսմներ, որոնք ստացվում են երկու տարբեր բույսերից: Լատենը ամուսնաճուրջ է և ստացվում է ծիստուս խմկաբեր տեսակից: Աֆիոն բուսում կակաչ քմաբեր տեսակի կաթնահյութն է, որը համդիսամում է օփիումի աղբյուր: Դրանցից ավելի հավանական է առաջինը:

Cistus ladaniferus L., ծիստուս խմկաբեր

Մշտադալար թուփ է: Տարածված է Միջերկրական ծովի առափնյա երկրներում, որտեղ մեկ մշակվում է արդյունաբերական չափերով: Ընծյուղները և տերևները պարունակում են հոտավետ ծյուր:

«35. Կոճապղպեղ. (Զեմեֆիլ)... 10»

Zingiber officinale DC., Կոճապղպեղ դեղատու

Բազմամյա խոտաբույս է: Բուսության մեջ չի պահպանվել: Մշակվում է աշխարհի գրեթե բոլոր արևադարձային երկրներում՝ հատկապես Հնդկաստանում: Համրահայտ կոճապղպեղ համեմունքը ստացվում է այս տեսակի կոճապղպեղից:

«36. Մազտաքի. (Սագըզ)... 20»

Pistacia lentiscus L., Պիստակենթի մաստիկայի

Ծառ է: Բուսության մեջ համդիպում է Միջերկրական ծովի ափամերձ երկրներում և կղզիներում՝ թափամեղով Ամատուիա, Սիրիա, Պաղեստին: Արդյունաբերական մպատակով մշակվում է հատկապես Էգեյան ծովի Բիոս կղզում: Մաստիկան ծյուր է, որ արտազատվում է ծառի բժից:

«37. Յուս. - որ է ծխամեղիք. - (Ի'տ կամ Էօտ աղանը)... 20»

Aquilaria agallochum Lour., Ակվիլարիա աղալուճի

Ծառ է: Տարածված է Հարավային Չինաստանում, Հնդկաստանում, Մալայան արշիպելագում, որտեղ մշակվում է մեկ արդյունաբերական չափերով: Բնափայտից ստացվում է հոտավետ ծյուր:

«38. Պալասամ. - որ է հեղուկ. - (Փելեսեմկ)... 120»

Commiphora opobalsamum (L.) Engl., Կոմիֆորա բալզամային (էջ 12)

«39. Ամպար (Ամպեր) ... 5»

Abelmoschus moschatus Medic., Աբելմոսխոս մշկաճուր

Միամյա խոտաբույս է: Տարածված է Հարավ-Արևելյան Ասիայի, Աֆրիկայի և Ավստրալիայի արևադարձային գոտում: Մշակվում է և արտահանվում մշված մայրցամաքներից: Սերմերից ստացվում է արժեքավոր եթերայուղ՝ ամբրետա:

«40. Մուշկ. (Միսք)... 5»

Մուշկը խիստ հոտավետ մյուր է, որի հոտը պահպանվում է երկար ժամանակ: Ըստ ծագման այն կարող է լինել կենդանական և բուսական, որոնք միմյանցից տարբերվում են իրենց քիմիական կառուցվածքով: Կենդանական մուշկը առաջանում է որոշ կաթնասունների և սողունների մաշկային գեղձերում: Այդպիսի գեղձեր ունեն մշկայծյամի, մշկամուկի, կուղբի, կոկորդիլոսի արունները: Արդյունաբերական մպատակով մուշկը հաճախ ստացվում է մշկայծյամից (*Moschus moschiferus* L.), որը տարածված է Արևելյան և Հարավ-

Արևելյան Ասիայում: Հաճախ այն կոչվում է ձեռք բերման վայրի ամուռով (մուշկ տիրեթի, մուշկ բեմգալի և այլն): Բուսական մուշկ պարունակում են տարբեր բույսեր, ինչպես վերը մշված Արեղսոսխուսը, Մշկեմին (*Adoxa* L.), Դուրը (Տե՛ս կետ 21) և այլն:

«41. Նարդոս խաթայի. (Սիմպիլի խիթայի)... 10»

Ferula assa-foetida L., Նարդես գարշահոտ

Բազմամյա խոտաբույս է: Համդիպում է Միջերկրական ծովի առափնյա երկրներում և, տարածվելով դեպի արևելք, հասնում Չինաստան ու Հիմալայներ մերառյալ: Մշակվում է Արևելքի երկրներում, ուր հայտնի է «պարսկական արմատ» անունով: Արմատի կաթմահյութը պարունակում է ձյութ, խեժ, եթերայուղ և այլ նյութեր:

«42. Արմատ մանուշակի. (Մեմեքշե Բեօքի)... 10»

Iris germanica L., Հիրիկ գերմանական

Բազմամյա խոտաբույս է: Համդիպում է Միջերկրական ծովի առափնյա երկրներում: Արդյունաբերական չափերով մշակվում է ման Ասիայի երկրներում՝ սկսած Փոքր Ասիայից մինչև Հոնկոնգում և Նեպալ մերառյալ: Կոճղարմատը պարունակում է մանուշակի բուրմունքով եթերայուղ:

«43. Մատուտակ. կամ Հոռոմ խումկ. (Միա)... 20»

Ս. Ե. Տեր-Հովհաննիսյանի հոդվածում այս կետը արտահայտվում է նույն ձևով, իսկ 1890 թ. Մաշտոցում «Հոռոմ խումկ՝ որ է միայ...» արտահայտությամբ: Նշված անունները համարժեք չեն: Մատուտակը քաղցրահամ արմատով բույսի անուն է: Հոռոմ խումկը ստացվում է Ստյոբրակ դեղատու, իսկ Միամ՝ Արուսեմի հարավային տեսակից: Ս. Մյուտոմին համահունչ են վերջին երկու նյութերը, որոնց մասին արդեն խոսվել է (Տե՛ս կետ 13, 16): Այստեղ հարկ է ծանոթանալ մատուտակի հետ:

Glycyrrhiza glabra L., Մատուտակ մերկ

Բազմամյա խոտաբույս է: Տարածված է ամբողջ Եվրասիայում, այդ թվում՝ Կովկասում և Անդրկովկասում: Կոճղարմատը ունի լայն կիրառություն:

«44. Նարնջի ծաղկի ջուր. (թուրումն չիչեյի սույու)... 20» (Տե՛ս կետ 27)

«45. Վարդեջուր. (Կիվ սույու)... 50» (Տե՛ս կետ 23)



Մաշտոցի ցուցակում արտահայտված բույսերի ամփոփումը ցույց է տալիս, որ մրա 45 կետերում, ընդհանուր առմամբ, առկա են 39 տեսակի բույսեր: Փորձենք համապատասխան ընկալությամբ հաստատել այս եզրահանգումը՝ դեկավարվելով յուրաքանչյուր կետում մեկ բույս կամ խափարկածով:

Բույսերի գիտական անունների շնորհիվ դժվար չէ համոզվել, որ Մաշտոցի ցուցակում մրամցից չորսը կրկնվում են: Դրանք են Կոմիֆորա բալզամային (1 և 38 կետեր), Դափնի ազնիվ (29 և 33), Նարնջեմի թթու (27 և 44) և Վարդ

Քարյուրատերն (23 և 45): Բացի այդ, երկրորդ կետում արտահայտված «Պալասամ Պերուի» քառերը ուշադրությունը ուղղում են դեպի ամերիկյան Միրոքսիլոմ բալզամակիր տեսակը: Սակայն իր աշխարհագրական տարածմամբ (Հյուսիսային Ամերիկա, Օւսն Պերու) այս բույսը բոլորովին օտարված է մնացած բույսերից, որոնց ունեն միջերկրածովյան և հարավ-արևելասահակամ տարածում: Այս կետի կապակցությամբ ավելի հավանական է Ս. Ե. Տեր-Հովհաննիսյանի ցուցակի «Ռումո պալասամի» տարբերակը, որը պետք է որ ակնկալի ոչ թե ամերիկյան «Պալասամ պերուի», այլ առաջին կետի առիակամ՝ Կոմիֆորա բալզամային տեսակը: Հետևաբար, ստացվում է, որ այդ կետը մույմականացում է 1-ին և 38-րդ կետերի հետ: Ի դեպ, մեզ համար գրեթե տարակուսանքից վեր է, որ Միրոքսիլոմ բալզամակիրը բացառվում է հայոց Ս. Մյուտոմից: Համեմայն դեպս մրա գործածությունը վերջինում չի կարող լինել օրինաչափություն:

Առաջին հայացքից կարծես ամորոշ է 8-րդ, 16-րդ, 43-րդ կետերում առկա երկու և 29-րդ ու 30-րդ կետերում՝ երեք միմյանց ոչ համարժեք բույսերի մկատմամբ ցուցաբերվելիք դիրքորոշումը: Սակայն կրկին բույսերի իմացությունը ուղղակի մատմամշում է այն բույսը, որը տեսականորեն ավելի հավանական է ամեն մի տվյալ կետում: Այս հարցում մեզ օգնում է բույսի քիմիական բնույթը և մրա օգտագործումը պայմանավորող մյուսի էությունը: Այս տեսանկյունից վերլուծելով մշված կետերում առկա բոլոր բույսերը, բնական է 8-րդ կետում նախապատվությունը տալ եթերայուղով հարուստ Մշկնկույզ հոտավետ տեսակին, քան ալկալոիդներով լեցուն Հացհամեն հումական խտին: 29-րդ և 30-րդ կետերում առաջնությունը հարկ է տալ համապատասխանաբար Դափմի ազմիվ տեսակի տերևին և Յիտրուս լիմետա տեսակի ծաղկին, քան օֆիոնմաբեր կակաչին, իսկ 43-րդում՝ Սոյուրակ դեղատու կամ Արուսեմի հարավային տեսակին, քան մատուտակին: Նկատեմք, որ և՛ Ս. դեղատու, և՛ Ա. հարավային տեսակները արդեն արտահայտված են, առաջինը՝ 13-րդ, երկրորդը՝ 16-րդ կետերում: Այսինքն մորից տեղի է ունեցել կրկնություն:

Այսպիսով, միայն բույսերի գիտական ամուսմների շնորհիվ հնարավոր դարձավ պարզել բոլոր կրկնությունները, ինչպես նաև մույմ կետի մի քանի բույսերից կատարել ամենահավանական բույսի ըմտրությունը: Միմյանք բույսերի ժողովրդական ամուսմների վրա հիմնվելու դեպքում ստիպված կլինեինք կրկնություն համարել 6-րդ և 41-րդ կետերի «Նարդոս»-ները կամ 25-րդ և 42-րդ կետերի «Մամուշակ»-ները, որոնք մկատի ունեն բոլորովին տարբեր բույսեր:

Բացառելով ցուցակում տեղ գտած կրկնությունները, ինչպես նաև վերանայելով երկու և երեք բույսերի ամուսմներ ըմդգրկող կետերը և ըստ կիրառական արժանիքների ըմտրելով մրանցից մեկ՝ Ս. Մյուտոմի համահումք բույսը՝ ըմդհամուր առմամբ, բոլոր կետերում մնում է 39 տեսակի բույս: Չմոռանաք նաև, որ Ս. Մյուտոմի կազմության մեջ մտնում է գիմին, որը մույմպես ումի քուսական ծագում և ստացվում է *Vitis vinifera* L. - խաղող մշակովի տեսակից: Մաշտոցում այն մշվում է ձիթապտղի յուղի հետ միասին, միայն ցուցակից հետո՝ ձամոթության կարգով:

Այսպիսով, ամփոփելով բույսերի գիտական ամուսմների վերծանության աշխատանքները և այդ տեսանկյունից վերանայելով 1876 թ. Մաշտոցի ցուցակը, կարելի է տեսականորեն մերկայացնել հայոց Ս. Մյուտոմի կազմությունը, որպես հիմնական մյուսի՝ ձիթապտղի յուղի և քառասուն տեսակի հոտավետ մյուսների և

բույսերի խառնուրդ: Ընդ որում, Ս. Մյուտոնի մեջ մտնում են բույսերի առանձին մասեր (արմատ, ծաղիկ, պտուղ և այլն), բույսերից արտազատվող նյութեր՝ թեղուկ (թալզամ) կամ չոր (խոնկ) վիճակում: Գործնականում, հավանաբար կապված նյութերի և բույսերի ձեռք բերված դժվարությունների հետ, միշտ չէ. որ հնարավոր է եղել ապահովել քառասունի բացարձակ կայունությունը: Այդ մասին Մաշտոցում հատուկ մշվում է. «Եւ ի նիւթոց ամտի եւ ի ծաղկանց մին կամ երկունս եւ երեքս պակաս լիցի մի արգելցես զմտոնի օրհնութիւմ...»:

Հետաքրքիր օրինաչափություններ են ի հայտ գալիս Ս. Մյուտոնի բույսերի առանձնահատկությունների և դրանց վրա հիմնված կիրառական մշակութային վերլուծությունից: Պարզվում է, որ Ս. Մյուտոնի բոլոր բույսերը օգտագործվում են մարդու կողմից տնտեսության բազմաթիվ ոլորտներում: Նրանք ավելի շատ գործածվում են սննդարդյունաբերության, դեղագործության և ժողովրդական ու գիտական բժշկության բնագավառներում: Հիմնականում հանդես են գալիս որպես համեմունքներ ու հոտավետացնող նյութեր, ինչպես նաև դեղաբույսեր: Բոլոր ասպարեզներում նրանց կիրառությունը պայմանավորված է մի շարք քիմիական նյութերի առկայությամբ, որոնց մարդը սովորել է ծառայեցնել իր նպատակներին դեռևս անհիշելի ժամանակներից: Ահա այդ ակտիվ, քիմիական նյութերի տեսակետից Ս. Մյուտոնի բույսերը վերլուծելիս պարզ է դառնում, որ նրանք տեսակավորվում են երկու հիմնական խմբերում: Բնականական ցուցանիշով աչքի է ընկնում երեքայուղեր պարունակող բույսերի խումբը, որը ընդգրկում է բույսերի ընդհանուր թվի կեսից ավելին (մոտ 70 %): Հաջորդ խումբը՝ ձյութեր պարունակող բույսերն են, որոնց ընդհանուր թիվը յոթն է: Դրանք են Կոմիֆորա բալզամային, Ստյուրակ դեղատու, Արուսենի հարավային, Ցիստուս խնկաբեր, Պիստակենի մաստիկայի, Ակվիլարիա աղալուծի: Անճշան մաս են կազմում (ընդամենը մի քանի տեսակ) այն բույսերը, որոնք պարունակում են ամենաբազմազան տիպի քիմիական նյութեր (օսլա, շաքար, սապոնին և այլն): Այսպիսով, ակնհայտ է դառնում, որ Ս. Մյուտոնի բույսերի գերակշռող մեծամասնությունը երեքայուղատուներ են, իսկ մյուս մասը՝ ձյութատուներ: Պարզվում է նաև, որ այդ բույսերի մեծամասնությունը մերձարևադարձային և արևադարձային կլիմայական գոտիներին բնորոշ են և տարածված են Միջերկրական ծովի և Հարավ-Արևելյան Ասիայի երկրներում: Ահա թե ինչու Հայաստանի ներկայիս տարածքում հանդիպում են նրանցից միայն մի քանիսը, որոնք թափանցել կամ հատուկ են քարեխառը գոտու երկրներին: Դրանք են խնկեղեգ եղեգայինը, վարդ հարյուրատերեք, Մանուշակ բուրավետը և վաղեմակ դեղատու: Այս առումով նաև հասկանալի է, թե ինչու Ս. Մյուտոնի բույսերի թիվը զգալիորեն ավելանում է պատմական Հայաստանի տարածքում: Այն տեղի է ունենում հատկապես ի հաշիվ Միջերկրական ծովին հարող մերձարևադարձային շրջաններին բնորոշ Ստյուրակ դեղատու, Պիստակենի մաստիկայի և այլ տեսակների:

Ահա եւ մի հետաքրքիր օրինաչափություն: Այն վկայում է հօգուտ հայոց Ս. Մյուտոնի և օժման յուղի օրգանական սերտ կապի ու սկզբունքային մեծության: Այդ կապը տեսնելու համար բավական է համեմատել միմյանց հետ օժման յուղը և հայոց Ս. Մյուտոնը: Անշուշտ, միանգամից աչքի է զարնում նրանց բաղադրիչների թվի մեծ տարբերությունը: Անկախ կարևորության աստիճանից, օժման յուղի գլխավոր նյութին խառնվում է չորս, իսկ հայոց Ս. Մյուտոնի գլխավոր նյութին՝

քառասուն քաղաղորդիչ: Ինչպես արդեն նշվել է, նրկուսի համար գլխավոր նյութը ճիթապտղի յուղն է կամ, ըստ քիմիական կառուցվածքի՝ հեղուկ ճարպը: Հաջորդ հիմնական նյութը օծման յուղի համար գնուտն է, իսկ հայոց Ս. Մյուտոնինը՝ բալասամը, որոնք քիմիապես միմյանց մոտիկ են և դասվում են հոտավետ ձյութերի շարքը, միայն այն տարբերությամբ, որ գնուտը պիմո՞ ձյութ է, իսկ բալասամը՝ հեղուկ, յուղային ձյութ: Բացի այդ, Ս. Մյուտոնի կազմում բալասամի հետ միասին հանդես են գալիս ևս վեց այլ բույսերից ստացվող ձյութեր: Վերջապես, և՛ օծման յուղի, և՛ Ս. Մյուտոնի համար գործածվում են հոտավետ նյութեր պարունակող բույսեր՝ եթերայուղատուներ: Օծման յուղի մեջ մրամք երեքն են՝ կիմամոն, խնկեղեգ, կասիա: Հայոց Ս. Մյուտոնի մեջ, ինչպես տեսանք, նշվածներին գումարվում են նաև բազմաթիվ այլ եթերայուղատուներ:

Այսպիսով, օծման յուղը և հայոց Ս. Մյուտոնը, բաղադրիչների ընդհանուր թվի մեծ տարբերությամբ համոզե՞րձ, ունեն կառուցվածքային ակնառու ընդհանրություն, որը արտահայտվում է մրամք մեջ մտնող նյութերի քիմիական բնույթի միատիպությամբ և դրանց որոշակի հարաբերությամբ: Այդ ընդհանրությունը կարելի է ներկայացնել հետևյալ պարզ սխեմայի օգնությամբ. հեղուկ ճարպ - ձյութ - եթերայուղ:

Մեր խորին համոզմամբ, նշված օրինաչափությունները, որոնց թիվը տվյալների բազմակողմանի վերլուծությամբ կարող էր ավելանալ, պատահական բնույթ չեն կրում: Մնում է զարմանալ, թե ինչպես Հայոց աշխարհին հաճախ ոչ բնորոշ այդ բույսերը խմբվել, համատեղվել և ամբողջացվել են կամայ Ս. Մյուտոնի մեջ: Ինչպես են ներդաշնակվել և կերտել իմաստությամբ ու իմացության գուտ ազգային հոգևոր մի կոթող: Հավանաբար այստեղ պետք է փնտրել հայոց Ս. Մյուտոնի խորհուրդը, մրա աստվածային կերտվածքը, թաքնված հայտնությունն ու երկրային դերը, քամգի մրամ էլ էր վերապահված դարերի դժմոհակ ճանապարհներին իրագործել իր կենտրոնաձիգ ու ազգապահպան առաքելությունը:

